ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-4-1-Ա

ք. Երևան 21.06.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի հունիսի 21-ի նիստում քննարկեց 2017 թվականի մայիսի 25-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Պոլիտան» ՍՊԸ (Երևան, Արշակունյաց 2, 205 սենյակ) ընկերության «XL» (No20161085) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «XL OLIVE» ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ նշանի, թե՝ բառային մասը և, թե՝ պատկերային մասը մատնանշում են ապրանքի տեսակը և հատկանիշները, այն է՝ «XL»–ը («extra large»), որը թարգմանաբար նշանակում է «շատ մեծ չափի» և օգտագործվում է տվյալ ապրանքի չափսերը նշելու համար, «МАСЛИНЫ С КОСТОЧКОЙ» («կորիզով ձիթապտուղ») և «WHOLE BLACK OLIVES» («ամբողջական սև ձիթապտուղ») արտահայտությունները նշում են ապրանքի տեսակը, իսկ նշանի պատկերային մասում պատկերված ձիթապտուղները՝ գրանցման ներկայացված ապրանքի պարզ վերարտադրումն է:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և բողոքը մասնակի բավարարելու վերաբերյալ, այն է՝ գրանցել ապրանքային նշանը բառային տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով, հաշվի առնելով որ բողոքարկողը բողոքում տվել է իր համաձայնությունը ներկայացված ապրանքային նշանի բառային տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու վերաբերյալ:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի ներկայացրած նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ, քանի որ բողոքում առկա է նոր հանգամանք՝ նշանի բառային տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «XL» (No20161085) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակիորեն բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ